

լեզու, Թուաբանութիւն, Գծագրութիւն, Թուասց և Հայոց գեղագրութիւն, կար և ձեռագօրծութիւն: Ուսանողուհեաց թիւն է 23. — այս դաստանը կան երեք ուսուցիչ և մի վարժուհի:

Նախապատրաստական դասատանում՝ ուսանում են Հայերէն և Ռուսերէն զբել և կարգալ, երգեցութիւն, կար և ձեռագործութիւն. — այս տեղ կայ մի ուսուցիչ. 35 աշակերտուհիք կան: Ուսումնաբանի բոլոր աշակերտուհիներից միայն 10ն են ձրիամոշակ խոկ մնացեալքն թռաշակաւողը են:

ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆԻ ԱՆԴԱՀԱՅ.

1. Ասմուէլ Բաղերեանց, 2. Յովհաննէս Խաչափեանց, 3. Յովհաննէս Միրզարէկեանց, 4. Խաչատուր Եղիշաղարեանց, 5. Մովսէս Աշուղեանց, 6. Կարապետ Քալանթարեանց, և 7. Արքահամ Գասպարեանց:

Տորեկան անդահայ՝').

1. Անդրէս Աբքեալիսկովոս 2. Սահակ Վարդապետ, 3. Պօղոս Շամիլեան Միլիք-Բէղարեանց, 4. Միջում Ավշարեանց, 5. Անտրոս Տէր Մարկոսեանց, 6. Միջայէլ Ղարաղաշեանց, 7. Բաղիշ Մարգիսբէկեանց, 8. Պօղոս Ներսիսեանց, 9. Արտեմ Ներսէսեանց, 10. Բագուարեակ Գրիգոր Գիլարիեանց, 11. Բագուար Գրիգոր Այլաղեանց, 12. Գէորգ Կաճկաճեանց, 13 Շահնշահ Ալասեանց, 14. Յարութիւն Տէր Եսայեանց, 15. Միքայէլ Արամեանց, 16. Յովհաննէս Բւզբաշեանց, 17. Աստուածատուր Զաքարեանց, 18. Զաւադ Տէր Ստեփանեանց, 19. Յարութիւն Տէր Մարգուեանց, 20. Ներսէս Ամարէկեանց, 21. Բարդաստոր Նազարեանց, 22. Գանձակիցի Ներսէս Տէր Ներսէսեանց, 23. Սահակ - Սերեբրակեանց, 24. Պասրոս Խաչատրեանց, 25. Յովսէփ Միլիք - Բէղարիեանց, 26. Դանիմ Գէորգեանց, 27. Գէորգ Միրզարէկեանց, 28. Բովհաս Ամիրեանց, 29. Թիֆլիզիցի Պէտր Տէր Յարութիւնեանց:

ԽԱՄԱՐԻԱԼ-ՀԵ.

1. Մարգարիտ Զօհրաբեանց, 2. Զարիմարդ Ավշարեանց, 3. Ոսկի Կաճկաճեանց, 4. Թագուհի Նազարեանց, 5. Խանում Խալափեանց, 6. Կատարինէ Ներսիսեանց, 7. Ոօնա Ներսիսեանց, 8. Մարիամ Կիկիտեանց, 9. Զամբաղ Քալանթարեանց, 10. Մարիամ Իւղբաշեանց, 11. Մա-

րիամ Զախարիեանց, 12. Մարգարիտ Ավշարեանց, 13. Զարվարդ Միրզարէկեանց, 14. Մարիամ Աշուղեանց, 15. Մարիամ Տէր Մարկոսեանց, 16. Խանում Լաղարեանց, 17. Ավսամնա Եղիշաղարեանց, 18. Եղիշարէմ Վարդանեանց, 19. Մարիամ Լալայեանց, 20. Զարվարդ Լալայեանց, 21. Զարվարդ Գեօգլայեանց, 22. Փեղրօնայ Աթարէկեանց, 23. Ոսկի Սերեբրակեանց, 24. Եղատարինէ Միրզայեանց:

ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻՑ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ.

Ճետեւեալ զգուշացուցիչ յօդուածը այլ և այլ տեսութեամբ համայն մերազնեայց ուշազրութեան արժանի կգտնեմք, և արժան կհամարիմք ամսագրոյս մէջ ևս հրատարակել:

ՄԱՅՐԱ-ՔԱՂԱՔԻ Ս. ՍԻՄՈՆԻ ՃԻԶՎԻԹ

ՄԱՅՐԱՊԵՏԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ.

Հայ մը պէտք է մասնաւոր նեղութիւն մը ըզգոյ այս մայրապետաց ճերմակ զիսարկներուն լցն եզերց շուքին տակ ծածկուած դէքերը տեսնելով, զի ասոնք Հայ ազգին անզգալի կերպով դէպ ի կրտսեան անդունզը կառաջնորդեն:

Ինչո՞ւ համար ասոնք իրենց ծննդեան երկիրները թողլով հազարաւոր մզնն հեռուները կերթան, ինչ նպատակաւ: - Պէտք չէ մեզ նպատակնին, զի ասոր վրայ ինչ ալ զրուցենք՝ ենթագրական է, գործելունուն նայինք և անով միայն կրտսեմք զրական կերպիւ հաստատել՝ թէ ասոնք մեր պազին կը վեսմէն թէ ոչ:

Գրեթէ ամեն երկրի զիսաւոր քաղաքաց մը զայս սպիտակ փեղյուները կը տեսնուին, որոց մէկ մասն հիւանդանոցաց մէջ կաշխատի և մէկ մասն ալ իգական սեռին դաստիարակութեանը կղբաղիւ:

Առոտանդնուալոյիս ալ ամենէն աւելի մայրապետաց բազմութիւն մի իր ծոցը մնուցանող քաղաքաց մին է Անկարիի է Եներայի մէջ փարրիկ շրջագայութիւն մ' լնել առանց այս մայրասպաներէն մի քանի հատ տեսնելու: Ասոնք՝ ինչպէս վերնը ըստիք, մէկ մասն հիւանդ գարմանե-

(1) Կամ ապառիկներ մի քանի անդամոց եւ խնամականութեաց վերայ՝ որոց հոգաբարձութիւնն խընդում է որ իւրեանց տուրքը վճարեն:

լու և մէկ մասն ալ անդիտութեամբ իրենց ձեռաքըն յանձնուած աղջկանց միտքն ու զածին պէս կրթելու կաշխատի Սական հարկ է նկատել՝ թէ որ աղջին աղջիկ զաւակաց վրայ է, որ այս պաշտօնը կը վայելեն: — (Թողունք Լառիները) — Թղրքուհնաց վրայ: — Ոչ, զի ասոնք արդէն իրենց կրօնական տարբերութեամբն ազատ մնացած են անոնց մարդակերպարան ճիրաններէն: Հրէից վրայ: — Ոչ, զի անոնք ալ նոյն պատճառըն ունին ասոնցմէ հետի մնալու: Յունաց վըրայ: — Ոչ, զի անոնք քանի՞ քանի՞ զիշերօթիկ աղջկանց վարժարաններ ունին: Պուլղարաց վրայ: — Անոնք ալ չեն, զի Պուլղարք ալ իրենց աղջիկ զաւակներն եթէ ու զեն դպրոցական կրթութեան ենթարկել՝ Յունաց դպրոցները կը դրկեն և ոչ թէ Ճիզմիթաց:

Ուրեմն Հայն է միայն՝ որ ամենէն աւելի անոնց գիրկը նետուած է. Հայն է միայն՝ որ աղջկանց գիշերօթիկ վարժարան մը չունենալով՝ անոնց զաստիարակութեանն յանձնած է իրեն այն ընտանեաց աղջիկ զաւակներն որք իզական սեռին կրթութեան պէտքն զգացած են:

Մանենք այս դպրոցաց մէջ և համրենք աշակերտուհները. եթէ այս Ճիզութական դպրոցաց մէջ հարիւր աշակերտներ կան, 50 ը Հայուհիներ են, Հայուհիներ՝ որք օտարին զաստիարակութիւններ կառնեն, որոց արդիութեան է Հայերէն խօսիլ, որոց փակուկ սրութեան աղջաման բնական բնական եռանդը յօդա կը ցնդի, տեղ ընելու համար զաստիարակուհնաց փչած անտարբերութեան կամ ազգատեցութեան և կամ օտարասիրութեան թշնին. գոնէ այս աշակերտուհներն ու սմունք առնէն, այն ալ չկայ, արդէն թութակի պէս Գաղղիելէն մը խօսելէ և առատ առակեղծաւոր կերպարանցներով աղօթք ընելէ զատուրիշ բան սովորած չունին:

Դժուար չէ ցուցնել քանի՞ քանի՞ ընտանիքներ՝ որոց զաւակներն իրը ուսումնաւարտ մարտական տական դպրոցներէն ենիկէ յետոյ՝ պէտք ունեցած են տարիներով Գաղղիելէն զառ առնուլ:

Թողունք սա միջանկեալ խնդիրը և զառնանք մը խօսքին:

Տաճկական առած մը կըսէ, և ծառը դարմեղած առենուը կը շտկուի, և Արդ՝ մեր աղջին այն աղջին տունիերն, ապագայ յշյոերն, ոյսովէտիքինց գարմ վիճակին մէջ զէպ յօտարն ուղղուելէ յետոյ կարելի՞ է այլ ևս զէպ ի Հայն ածել: Ա՞ր կերթայ գործոյն վերջը եթէ Հայն իւր աղջիկ զաւակներէն տարին 50—60 հոգի օտարացնէ . . . Միենք է աղջիկ զաւակին արուեն տարբերութիւնը զի առաջնոյն ձեռքն է ապագայ սերնդեան կրթութիւնը. Բնէ զգացում որ կրէ մայրը՝ նոյնը կը կրէ զաւակը, Բնէ որ սիրէ մայրը՝ նոյնը կը սիրէ զաւակը: Սա փորձով ալ հաստատուած է: Օտարական մը Հայ կին մը կառնէ, զաւակը և ես Հայ եմ, կըսէ: Հայ մը օտարական կին մը կառնէ զաւակն և ես Գաղղիացի կամ Խոտայի կամ Անգղիացի եմ, կըսէ: Տարակցյա կիմայ այլ ևս՝ որ մայրաղետաց դպրոցէն ելած աշակերտուհնոյ մը զաւակն ալ իւր մօր օտարասէր կամ աղջատեաց և կամ անտարբեր զգացումները չը կրէ:

Արդ՝ Բնէ կըմայ 100-150 կամ աւելի տարիներ վիրջը՝ եթէ մենք շարունակենք սյապէս ամեն տարի ապագայ սերնդէն խել մ' անդամներ օտարացնել: Ալ այն ատեն Պոլսոյ ժողովրդեան մէկ մօսը կազմակ բերքու կոչուած ժողովրդէն ուրիշ Բնէ տարբերութիւն կունենամք:

Սթափիմք քուներնէս և քաշնմք հանեմք մը ձեռքերն ոյն Կալիպսէներու ձեռաց մէջէն, որք զմեզ քաղցրութեամբ հրապուրելով կը վարեն զէպ յայն Ավկիանոսը՝ որոյ մէջ թաղուած են շատ մը հին աղջեր:

Ճեռք ձեռքի տամբ և ամենքնին մէկանց ընեմք իգական սեռին համար ինչ որ բարերարն Պարակեզեան առանձինն ըրաւ արական սեռին համար: Փրկեմք զմեզ ներկոյ ամօթէն և ապագայ կորուստէն . . .

Գ. Ա. (Կորագիբը.)

Եթէ տակաւին ի Պոլիս այսպիսի անտարբերութիւն կայ և աեղական աղջային Վարչութիւնն մանաւանդ Ա. Պատրիարք Աերսէս Ըրքեպիսկոպոս և Արքունական Ժողովն չեն խնամք տանիիր առաջը առնելոյ համար, հապա զաւառները ինչ վիճակի մէջ կընին: Ա՞թէ աղա-

տութիւն չեն վայելսը Շիզվեթաց դըպ-
րոցաց նման օտար դպրոցներէն հեռի և
զրոյշ մնալու, և ով կարող է զինքեանս
մղել և բռնաբարել անշուշտ այնպիսի
դպրոցաց յաճախելցյ և ի նոսին դաս-
տիարակուելոյ համար:

Կամիմք յուսալ, զի գեթ այսուհետե
կարեոր զգուշութիւնքը և հոգացողու-
թիւնքը ամեն տեղ ձեռք կառնուն՝ միան-
գամայն միամիտները և մերազնեայ ման-
կունքը կազման օտար դաստիարակու-
թենէ և ի կորուստ մատնուելէ:

Հ Ա Ն Գ Ի Ս

Թ Ե Ր Չ Ր Ե Շ Ն Ո Ր Հ Տ Վ Ի Ս Կ Ե Մ

Ա. Ա. Բ Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ւ .

Անցեալ Հինգարթի (դեկտ. 25) Քարձրա-
շնորհ Տ. Արիստակէս Ա. Արքապիսկոպոս՝ յետ եր-
կարատեւ հիւանդութեան իւր մահկանացուն կը ն-
քեց ի հաստկի 63 ամաց:

Երջանկայիշատակ Սրբազնի օծման և թաղ-
ման տխուր հանդէսն կատարեցաւ հետեւ ալ Աւր-
բաթ օրն Եւսկիւտարու Ա. Խոչ Եկեղեցին և
մարմինն ամփոփեցաւ նոյն Եկեղեցւոյ սրահին մէջ
դունուած գերեզմանն, զոր Հոգելցյս Յակոբոս
Ա. Պատրիարք իրեն համար պատրաստած էր
իւր կենդանութեան:

Երջանկայիշատակ Հանգուցեան իւր աննենգ,
հեղ և քաղցրաբարց բնաւորութեամբն ճշմարիտ
առաջինութեան տեսպար մի էր բոլոր եկեղեցա-
կան դատուն, և իր կրօնական և ազգային նա-
խանձայուզութեամբն՝ Եկեղեցւոյ և Ազգին սէրն
յինքն դրաւած էր Մանաւանդ վերջին տարիներս
իւր Տեղապահութեան օրով՝ մինչեւ իսկ ամենա-
կնճռայից պարագաներու մէջ ամենայն հաւա-
տարմութեամբ Ազգին ծառայեց և անոր իրա-
ւունքներն պաշտպանեց, և Առաջնութեան խող-
ոյն մէջ անձնուիրարար Ազգին պատոյն նախան-
ձախնդիր և շահատակ կանգնեցաւ զերծ ամեն
նկատումներէ. թէսպէտ ինքն անոր զոհ զնաց, և
Ազգին ալ զլացաւ անոր զինոյն արժանաւոր պը-
տակ մի հիւսելու, բայց պատմութիւնը կենդանի

է, և դարուց ի դարս պիտի անմահացնէ անոր
ծառայութիւններն՝ որք նորա անսատիւտ և ան-
բասիր ալիքն փառաւորեցին և ի վարձ երկնացին
հանդիսաւ և մսիթարութիւն շնորհեցին:

Հանգուցեալ Սրբազնին մահն թէւ իրեն ան-
մահութեան նախադռւուն է բայց Ազգին հա-
մար ցաւալի կորուստ մի է. Այս առթիւ Հան-
գիսիս Խմբագրութիւնն իւր խորին ցաւակցութիւ-
նըն յայտնեղվ, կմաղմէ մսիթարութիւն՝ եր-
կար կեանք և յաջութիւն վախճանելոյն հոգե-
սուն Բարձրաշնորհ՝ որդեկին՝ Սրբազն Պատ-
րիարք Հօր որ իւր հոգեոր հօր առաքինական բա-
րեմանութեանց պատկերն կ'կը է իւր վերայ, և
որ իւր Ազգասիրական մեծապործութիւններովն
կանխաւ կ'խոստանայ իւր երջանկայիշատակ հօր
մահն անզգալի ընել:

Լոյս.

Հ Ա Ն Գ Ո Ւ Տ Ե Ա Լ Ս Տ Ե Փ Ա Ն Ա Ց
Մ Ա Ն Գ Ի Ն Ե Ա Ն Ց

Ամսոյս (Փետր.) 11 ին զինի կիսաւուր կարձատե
հիւանդութիւնից յետ առ Տէր փոխեցաւ Մողնու-
Աւագ քահանայ Ստեփան Մանղինեանցը: Հան-
գուցեալ Հայրը դարուս նշանաւոր եկեղեցական-
ներից մէկն էր, նա յայտնի էր իրքեւ դործուն-
եաց անձն եկեղեցական վարչութեան մէջ, ուս-
տի և հանգուցեալ Ներւէս Ամեղիկոսը շատ
անգամ Խրէիլ է նորան քննիչ զանազան վի-
ճակներ: Հանգուցեալն ոչ պակաս նշանաւոր էր
իւր ուսումնականութեամբ ի շարս Հայ եկեղե-
ցականաց և իրքեւ յիշատակ թողած է շատ եր-
կամիրութիւնք, որոնց մի քանին արդէն տպազ-
րած են և այլք զեռ ևս անտիպ: Ուսումնակը
էր Հանգուցեալն և աշխատասէր. — մինչեւ ան-
գամ հիւանդութեան ժամանակ Տէր դազարում
իւր ուսումնական պարապմունքներից որոնց մէջ
դատում էր մսիթարութիւն և ուրախութիւն: Հանգուցեալ Հայրը եղել է և Մեղու Հայաս-
տանի Ըստավոյս նախկին խմբազիր և երկար ժա-
մանակ կրօնուսոց Ներփական Հոգեոր Դպրո-
ցու: — Յաղիկի է այսպիսի եկեղեցականաց
յիշատակը:

Մեղու Հայաստանի, թ. 6.